Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 20.03.2018թ. որոշման
Գործում է 22.03.2018 թվականից

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ 06

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Եթե այլ բան նշված չէ կամ բովանդակությունը կամ համատեքստն այլ բան չի պահանջում, սույն Կանոններում օգտագործվող տերմիններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

Բանկ - «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն:

Որոշում – ՀՀ Կառավարության 2014թվականի մարտի 6-ի՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին», N 275-Ն որոշումը :

Հաշվեփեր - երեխա, ում անվամբ բացվել է ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշիվ:

Ծնող - նոր ծնված երեխայի հայրը կամ մայրը, ումից սերված լինելու փաստը որոշված է օրենքով սահմանված կարգով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացրել է նպաստը նշանակելու դիմում, նոր ծնված երեխայի խնամակալ կամ որդեգրող.

Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձ կամ Հաճախորդ - Հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնող, ով ՀՀ օրենսդրության համաձայն, իրավունք ունի տնօրինելու Պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցները (ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ձեռք բերած անձի տվյալները Բանկին է տրամադրում Լիազոր մարմինը՝ Հաշվետիրոջ հետ ՀՀ-ում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) Ծնողի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դիմում ներկայացվելուց հետո):

Կողմեր – Հաճախորդը և Բանկը միասին:

Հաշվի պայմանագիր (Պայմանագիր) - Հաճախորդի կողմից սույն կանոններին միանալու միջոցով Բանկի հետ կնքված պայմանագիր, որի համաձայն Բանկը պարտավորվում է Հաշվետիրոջ անունով բացել ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշիվ և այդ հաշվով իրականացնել օրենքով, Որոշմամբ, սույն կանոններով նախատեսված գործառնությունները:

Դիմում-պայմանագիր (Դիմում) - Բանկի՝ ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշիվների բացման և ընտանեկան դրամագլխի սպասարկման հիմնական

(ընդհանուր) կանոններին միանալու մասին դիմում, որը ստորագրվել է Հաճախորդի կողմից Բանկի սահմանած (որոշած) ձևով և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի պայմանագիր կնքելու նպատակով:

Հաշվի փակման դիմում - դիմում, որը կազմվել է Հաշվետիրոջ կամ Հաճախորդի կողմից Բանկի սահմանած (որոշած) ձևով և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի պայմանագիրը (պայմանագրերը) լուծելու նպատակով:

Սպասարկող ստորաբաժանում - Բանկի Հայաստանի Հանրապետության գործող ստորաբաժանում (այդ թվում՝ Բանկի առանձնացված (տարածքային) ստորաբաժանում), որտեղ կարող են ներկայացվել ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշվի բացման և ընտանեկան դրամագլխի սպասարկման համար անհրաժեշտ փաստաթղթերը, և որում կատարվում է հաշվի սպասարկումը:

Ընտանեկան դրամագլուխ – ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցներ:

Դիմումի իրական շահառու - Նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխա (զավակ), ընտանեկան դրամագլուխը տնօրինող չհանդիսացող Ծնող, ում օգտին (ուսման վարձը վճարելու համար), ՀՀ օրենսդրության համաձայն, ներկայացվել է Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու դիմումը:

Ծառայության տարածքային բաժին – Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) տարածքային բաժին:

Պետական աջակցության հաշիվ կամ Հաշիվ – Հաշվետիրոջ անվամբ Բանկում բացված հատուկ հաշիվ, որում առկա միջոցները տնօրինելը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Լիազոր մարմին – Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Կանոններ – Պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման սույն հիմնական (ընդհանուր) կանոնները, որոնք սահմանված են Բանկի կողմից ստանդարտ (տիպային) ձևով՝ Հաճախորդի կողմից առաջարկվող պայմանագրին ամբողջությամբ միանալու միջոցով պայմանագիրը կնքված համարելու համար:

Հավելվածներ Հաշվով գործառնությունների կատարումը կարգավորող ցանկացած փաստաթուղթ, Կողմերի միջև առանձին ձևով կնքված համաձայնագրեր (պայմանագրեր)՝ ներառյալ Դիմում-պայմանագիր, Բանկի կողմից սահմանած պայմաններ:

Տեղեկատվական ամփոփագիր - Ընտանեկան դրամագլխի սպասարկման Պետական աջակցության հաշվի սակագների, տոկոսադրույքների, տարեկան տոկոսային եկամտաբերության, տույժերի և ավանդների ներգրավման կարգի և պայմանների վերաբերյալ տեղեկատվական ամփոփագիր:

Կանոնների նույնականացնող տվյալները - Ընդունող մարմինը՝ Բանկի վարչություն, ընդունման ամսաթիվ ___.___.201-թ., թիվ ____ որոշում,

Սակագների նույնականացնող տվյալները - Ընդունող մարմինը՝ Բանկի վարչություն, ընդունման ամսաթիվ ___.___.201-թ., թիվ ____ որոշում:

Տեղեկատվական ամփոփագրի նույնականացնող տվյալները - Ընդունող մարմինը՝ Բանկի վարչություն, ընդունման ամսաթիվ ___.___.201-թ., թիվ ____ որոշում: Կանոնները (Սակագները և այլ հավելվածները), ներառյալ՝ փոփոխությունները հրապարակվում են Բանկի ինտերնետի տնային էջի հետևյալ հղումով բացվող ենթաէջում http://www.armbusinessbank.am/am/page/Bank-account:

1.1. Մեկնաբանման կանոններ. Եթե այլ բան նշված չէ կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, ապա Կանոններում՝

ա) բաժինների անվանումներն օգտագործվում են միայն վկայակոչման նպատակով և չեն սահմանափակում կամ ներգործում նրանց նշանակության վրա.

բ) եզակի թվով սահմանված տերմինները (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը.

գ) որևէ բաժնին, կողմին կամ հավելվածին որևէ հղում համարվում է հղում՝ սույն Պայմանագրի տվյալ բաժնին կամ կողմին կամ հավելվածին.

դ) ցանկացած փաստաթղթի (ներառյալ առանց սահմանափակման սույն Կանոնների) վկայակոչումը կամ սահմանումը, կամ հղումը կհամարվեն վկայակոչում այդ փաստաթղթին, որը ժամանակ առ ժամանակ կարող է լրացվել, վերանայվել կամ փոփոխվել սույն Կանոնների համաձայն, բացառությամբ այն փոփոխությունների, լրացումների կամ վերանայումների, որոնք կատարվել են սույն Կանոնների պահանջների խախտմամբ, ընդ որում՝ սույն Կանոններին հղումը համարվում է վկայակոչում նաև դրա անբաժանելի մասը կազմող փաստաթղթերին (հավելվածներ և այլն).

ե) ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին կամ նրա իրավահաջորդին.

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Սույն Կանոնները սահմանում են Բանկի կողմից Պետական աջակցության հաշվի բացման և վարման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) կարգն ու պայմանները, և կարգավորում են Պետական աջակցության հաշվի հետ կապված Բանկի և Հաճախորդի միջև ծագած պայմանագրային հարաբերությունները:

2.2. Կանոնները բոլոր Հաճախորդների համար սահմանվում են ստանդարտ (տիպային) ձևով և համարվում են Պետական աջակցության հաշվի բացման և ընտանեկան դրամագլխի սպասարկման վերաբերյալ Հաճախորդին առաջարկվող պայմանագրի պայմաններ:

Պետական աջակցության հաշվի պայմանագիրը կնքվում է քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածին համապատասխան՝ Հաճախորդի կողմից սույն Կանոններին ամբողջությամբ միանալու միջոցով և իրականացվում է Հաճախորդի՝ Կանոններին միանալու դիմումը (կազմված Բանկի սահմանած Դիմում-պայմանագրի օրինակելի ձևով, ստորագրված Հաճախորդի կողմից)՝ Բանկին հանձնելու միջոցով: Դիմում-պայմանագիրը համարվում է Բանկին հանձնված, իսկ կոնկրետ Հաճախորդի հետ Պետական աջակցության հաշվի պայմանագիրը կնքված՝ Հաճախորդի կողմից տրված Դիմում-պայմանագրի վրա Պետական աջակցության հաշվի բացման մասին Բանկի, ի դեմս լիազորագրի հիման վրա հանդես եկող լիազորված անձի, նշագրման պահից:

2.3. Կանոններին միանալու Դիմում-պայմանագրի օրինակելի ձևերը սահմանվում է Բանկի կողմից: Միակողմանիորեն Կանոններին միանալու Դիմում-պայմանագրի օրինակելի ձևը Պետական աջակցության հաշվի պայմանագիր կնքելու մտադրություն ունեցող Հաճախորդներին տրամադրվում է սույն Կանոնների 2.5 կետով նախատեսված կարգով հրապարակելու միջոցով:

2.4. Հաճախորդի հաշվարկային և ընտանեկան դրամագլխի սպասարկումն իրականացվում է՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, Որոշմամբ սահմանված կանոնների, դրանց համապատասխան բանկային կանոնների (Բանկի կանոնների), բանկային բնագավառում կիրառվող գործարար շրջանառության սովորույթների, միջազգային

պրակտիկայում օգտագործվող կանոնների, ինչպես նաև սույն Կանոնների: Օրենսդրության, Որոշման, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում՝ սույն Կանոնները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում համապատասխան իրավական ակտերի պահանջներին:

2.5. Բանկը, Հաճախորդների կողմից սույն Կանոններին և Բանկի կողմից Պետական աջակցության հաշվի բացման և ընտանեկան դրամագլխի սպասարկման վերաբերյալ հայտարարված սակագներին, հետայսու՝ «Սակագներ», Տեղեկատվական ամփոփագրերին ծանոթանալու նպատակով, սույն Կանոնները (այդ թվում Կանոններում կատարված փոփոխություններն ու լրացումները), Սակագները (այդ թվում Սակագներում կատարված փոփոխություններն ու լրացումները) և Տեղեկատվական ամփոփագրերը (այդ թվում Տեղեկատվական ամփոփագրերում կատարված փոփոխություններն ու լրացումները) իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ Բանկը Կանոններին և Սակագներին վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝

ա) Բանկի ինտերնետային տնային կայքէջում.

բ) Բանկի մասնաճյուղերում և Հաճախորդների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով.

գ) Հաճախորդների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով.

դ) այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Հաճախորդին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

2.6. Կանոնները կազմվել են՝ ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով, Որոշմամբ և դրանով հաստատված կարգերով ու պայմաններով, Լիազոր մարմնի և Բանկի միջև 29.04.2014թ. կնքված Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) պայմանագրով (այսուհետ՝ Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագիր), ՀՀ գործող օրենսդրությամբ:

ԲԱԺԻՆ 3. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Ընտանեկան դրամագլխի տնօրինման նպատակով Բանկը Հաշվետիրոջ (երեխայի) անվամբ բացում է հատուկ բանկային հաշիվ՝ Պետական աջակցության հաշիվ, Ծնողի՝ Հաճախորդի կողմից Դիմում-պայմանագրի ստորագրման և Բանկին հանձնելու օրը:

3.2. Պետական աջակցության հաշիվը բացելուց հետո Հաճախորդը կարող է Բանկից ստանալ Պետական աջակցության հաշվի մասին տեղեկանք՝ Որոշմամբ նախատեսված դեպքերում համապատասխան հաստատություններին ներկայացնելու համար:

3.3. Պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցները, մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը՝ անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով, տնօրինվում է Ընտանեկան

դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից բացառապես սույն Կանոնների 5.1 կետով նախատեսված ուղղություններով, բացառությամբ սույն Կանոններով նախատեսված հատուկ դեպքերի:

3.4. Բանկը, Հաճախորդի կարգադրությամբ (հանձնարարականով), օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված (նախատեսված) դեպքերում Հաճախորդի կողմից Հաշվից դրամական միջոցների անկանխիկ ելքագրման գործառնություններ իրականացնելու համար՝ Բանկին ներկայացված պատշաճ ձևով կազմված այլ փաստաթղթերի հիման վրա, Հաշվից անկանխիկ փոխանցում է կատարում, իսկ Որոշմամբ նախատեսված դեպքերում՝ կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը (պարբերական վճարման հանձնարարագրում նշված վճարման օրը/օրերին, իսկ եթե այդպիսի օր նշված չէ, ապա հանձնարարագիր ներկայացնելու օրը):

Նշված գործառնությունները, Բանկի հայեցողությամբ, կարող են իրականացվել ավելի կարճ ժամկետներում՝ Բանկի կողմից նախատեսված կարգով և պայմաններով: Կարգադրությունները (հանձնարարականները) կատարման ընդունելու, հետկանչելու, վերադարձնելու (չեղարկելու) կարգը (ընթացակարգը) սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն և Բանկի ընտրությամբ Հաճախորդին հասանելի է դարձվում սույն Կանոնների 2.5 կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

3.5. Հաշվում եղած դրամական միջոցների տնօրինման ուղղությունները, պայմաններն ու կարգը, սահմանափակումները նախատեսված են սույն Կանոնների Բաժին 5-ում: Հաշվով գործառնությունների իրականացման Հաճախորդի իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով կամ Որոշմամբ նախատեսված դեպքերում:

3.6. Եթե այլ բան սահմանված (նախատեսված) չէ գործող օրենսդրությամբ կամ Որոշմամբ, կամ ՀՀ իրավական ակտերով, ապա բացի երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարից և Բանկի կողմից վճարվող տոկոսներից Հաշվին կանխիկ կամ անկանխիկ դրամական միջոցների մուտքագրումն արգելվում է:

Բանկի կողմից Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները Բանկը, անակցեպտ կարգով՝ սույն Կանոններով նախատեսված ժամկետներում, դուրս է գրում (գանձում է) Հաշվից առանց վերջինիս լրացուցիչ կարգադրության (համաձայնության)՝ Բանկի հաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա:

3.7. Բանկը Հաշվետիրոջ անունով բացում է Հաշիվ, եթե Հաճախորդը Բանկին ներկայացրել է Հաշվի բացման և Ընտանեկան դրամագլխի սպասարկման (վարման) համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, որոնք հրապարակված են Բանկի ինտերնետի տնային էջի հետևյալ հղումով բացվող ենթաէջում http://www.armbusinessbank.am/am/page/Bank-account:

3.8. Բանկն իրավունք չունի մերժելու Պետական աջակցության հաշիվ բացելը:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Բանկն իրավունք ունի՝

4.1.1 հրաժարվել հաշվարկային և դրամարկղային գործառնությունների կատարումից այնպիսի փաստերի առկայության դեպքում, որոնք վկայում են Հաճախորդի կողմից Որոշման և սույն Կանոնների բաժին 5-ով և 6-ով նախատեսված պայմանների խախտման մասին.

4.1.2 Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա, առանց Հաճախորդի լրացուցիչ կարգադրության, համապատասխան պահանջագիրը ներկայացնելու օրվան հաջորդող երրորդ բանկային օրվանից ոչ ուշ փակել Պետական աջակցության հաշիվ և դրանում առկա դրամական միջոցները փոխանցել այլ պետական աջակցության հաշիվ կամ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

4.1.3 Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա դադարեցնել Պետական աջակցության հաշվով գործառնությունների իրականացումը.

4.1.4 ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում (եթե Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու դիմումի իրական շահառուն նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխան կամ զավակն է), Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու դիմում ներկայացնելուն հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ, Լիազոր մարմնին տրամադրել սույն Կանոնների N 1 հավելվածով սահմանված Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու դիմում ներկայացրած անձի և դիմումի իրական շահառուի տվյալները.

4.1.5 Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա Հաշվից ՀՀ պետական բյուջե փոխանցել ավելի վճարված երեխայի ծննդյան միանվագ նպաստի գումարները՝ Լիազոր մարմնին տեղեկացնելով ՀՀ պետական բյուջե փոխանցված գումարի (իսկ Հաշվում բավարար միջոցների բացակայության դեպքում՝ նաև փոխանցման ենթակա, սակայն չփոխանցված գումարի) մասին՝ համապատասխան պահանջագիրը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից ոչ ուշ.

4.1.7 Լիազոր մարմնի պահանջագրի հիման վրա փակել Պետական աջակցության հաշիվը և Պետական աջակցության հաշվին առկա միջոցները վճարել պահանջագրում նշված անձին.

4.1.8 Լիազոր մարմնի կողմից ներկայացված պահանջով Լիազոր մարմնին տրամադրել Պետական աջակցության հաշվի մասին տեղեկատվություն (այդ թվում՝ փաստաթղթերի պատճեններ).

4.1.9 Պետական աջակցության հաշվին առկա միջոցներն սպառվելու (զրոյացվելու) դեպքում՝ փակել Պետական աջակցության հաշիվը և դրա մասին տեղեկացնել Լիազոր մարմնին.

4.1.10 փոփոխել Հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, Սակագները, Տեղեկատվական ամփոփագրերը՝ այդ մասին տեղյակ պահելով Հաճախորդին սույն Կանոններով նախատեսված կարգով:

4.2 Հաճախորդն իրավունք ունի՝

4.2.1 յուրաքանչյուր ամիս մեկ անգամ անվճար ստանալ Հաշվին մուտքագրված դրամական միջոցների մասին տեղեկատվություն (այսուհետ՝Քաղվածք).

4.2.2 ինքնուրույն տնօրինել Հաշվում առկա դրամական միջոցները՝ հաշվի առնելով սույն Կանոնների 5-րդ բաժնով և Որոշմամբ նախատեսված սահմանափակումները:

4.3 Բանկը պարտավոր է՝

4.3.1 Պետական աջակցության հաշիվը սպասարկել (վարել) ՀՀ օրենսդրության և Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի համաձայն.

4.3.2 Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագիրը լուծելու դեպքում պատշաճ կարգով ծանուցել Հաճախորդին՝ այդ պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ.

4.3.3 Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի լուծման դեպքում, լուծման օրվա դրությամբ, Բանկում առկա Ընտանեկան դրամագլխի միջոցները, Ծառայության պահանջագրի հիման վրա, փոխանցել գանձապետական միասնական հաշվի՝ այդ նպատակով բացված ավանդային ենթահաշվին.

4.3.4 Հաճախորդին տրամադրել Հաշվի բացման մասին տեղեկանք՝ այդ հաշվին Ընտանեկան դրամագլխի գումարների փոխանցումներն իրականացնելու համար.

4.3.5 Հաշվին առկա դրամական մնացորդի դիմաց վճարել տոկոսներ՝ Սակագներով նախատեսված չափով և կարգով, որը չի կարող պակաս լինել Բանկի կողմից ՀՀ դրամով ժամկետային ավանդների ընդունման համար սահմանված տարեկան տոկոսադրույքների նվազագույն չափից.

4.3.6 Հաճախորդի կողմից կամ նրա անվամբ մուտք եղած կամ փոխանցված դրամական միջոցները մուտքագրել Հաշվին ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ

մուտք լինելու՝ համապատասխան դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող բանկային օրը.

4.3.7 Հաշվի բացումն ու Ընտանեկան դրամագլխի սպասարկումը, ինչպես նաև այդ Հաշվից փոխանցումներն իրականացնել անվճար.

4.3.8 Հաճախորդի պահանջով Հաշվից դրամական միջոցներ ելքագրել ոչ ուշ, քան վերջինիս կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերը Բանկ մուտք լինելուն հաջորդող բանկային օրը, ընդ որում առանց Հաճախորդի կարգադրության և համաձայնության, Հաշվում եղած դրամական միջոցներ դուրս գրել սույն Կանոններով նախատեսված դեպքերում և կարգով.

4.3.9 Դիմում-պայմանագրում նշված եղանակով (փոստային, էլեկտրոնային կամ առձեռն) Հաճախորդին տրամադրել Հաշվի քաղվածք՝ յուրաքանչյուր ամսում մեկ անգամ անվճար, իսկ Հաճախորդի պահանջով մեկ ամսվա ընթացքում մեկից ավել անգամ տրամադրել՝ համաձայն Բանկի կողմից հայտարարված Սակագների.

4.3.10 Հաճախորդի կողմից չպահանջված կամ չստացված հաշվի քաղվածքները պահպանել 3 (երեք) տարի.

4.3.11 Պայմանագրի գործողության ընթացքում նախատեսվող փոփոխությունների (Կանոնների, Սակագների, Կողմերի իրավունքների, պարտականությունների և այլ պայմանների) վերաբերյալ, առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ՝ սույն Կանոնների 2.5 կետով սահմանված կարգով և(կամ) օրենքով նախատեսված կարգով և(կամ) գրավոր, փոստային կապի միջոցով, տեղեկացնել Հաճախորդին.

4.4 Հաճախորդը պարտավոր է՝

4.4.1 Հաշվի բացման համար ներկայացնել Բանկի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը.

4.4.2 Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագիրը լուծվելու դեպքում Բանկի կողմից դրա մասին պատշաճ կարգով ծանուցվելուց հետո, ուրիշ բանկում պետական աջակցության հաշիվ բացելու և այդ հաշվին Բանկում բացված Հաշվում առկա Ընտանեկան դրամագլխի միջոցները փոխանցելու համար ներկայանալ Ծառայության տարածքային բաժին՝ ներկայացնելով դիմում և Որոշմամբ սահմանված համապատասխան փաստաթղթեր:

4.5 Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, Հաճախորդի հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, Հաճախորդին վճարվելիք տոկոսագումարներից իրականացնում է հարկերի գանձում՝ համաձայն գործող օրենսդրության:

ԲԱԺԻՆ 5. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

5.1Պետական աջակցության հաշվի միջոցների տնօրինման ուղղությունները՝

1) Ընտանեկան դրամագլուխը, մինչև Հաշվետիրոջ 18 տարին լրանալը՝ անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով, տնօրինվում է Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից բացառապես հետևյալ ուղղություններով՝ Հայաստանի Հանրապետությունում բնակարանի, բնակելի տան գնման, կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկառուն հաշվետիրոջ Ծնողն է (բացառությամբ խնամակալի).

2) Հաշվետիրոջ կամ Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, Հաշվետիրոջ Ծնողի՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական

հաստատության վարձավճարը) վճարելու համար.

3) Հաշվետիրոջ Ծնողին (բացառությամբ խնամակալի) տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու համար, եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն և առկա է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը՝ վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ.

4) ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի (այսուհետ՝ գույք) գնման համար, եթե գնորդը Հաշվետիրոջ Ծնողն է՝ բացառությամբ խնամակալի (գումարը գույք վաճառողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով).

5) Նոր ծնված երեխայի մեկ տարին լրանալու ամսվան հաջորդող ամսվանից՝ ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական վճարումներ կատարելով, բայց ոչ ավելի, քան ամսական 25000 դրամը (սույն ենթակետի գործողությունը դադարում է 2018 թվականի դեկտեմբերի 30-ից):

5.2 Որոշմամբ սահմանված դեպքերում Ընտանեկան դրամագլուխը, Հաճախորդի համար սահմանված կարգով, կարող է տնօրինվել նաև Հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված) նրա մյուս Ծնողի կողմից, ով Ծառայության տարածքային բաժին է ներկայացրել Որոշմամբ սահմանված դիմում և փաստաթղթերը, ինչի հիման վրա Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով Ծառայությունը Բանկին է տրամադրել Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի տվյալները:

5.3 Հաշվետիրոջ չափահաս (18 տարեկան) դառնալուց հետո՝ Պետական աջակցության հաշվին առկա դրամական միջոցները կարող է անխոչընդոտ տնօրինվել բացառապես Հաշվետիրոջ կամ նրա լիազորված անձի կողմից՝ սեփական հայեցողությամբ, առանց որևէ սահմանափակման:

5.4 Որոշմամբ սահմանված դեպքերում Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցողի Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունքի դադարեցման մասին Ծառայությունից ստացված պահանջագրի հիման վրա՝ Բանկը դադարեցնում է Պետական աջակցության հաշվով գործառույթների իրականացումը՝ մինչև Ծառայությունից այլ պահանջագիր ստանալը կամ Հաշվետիրոջ 18 տարին լրանալը:

5.5 Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի թույլտվությամբ, Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի դիմումի հիման վրա, Ընտանեկան դրամագլուխը կարող է ծախսվել Հաշվետիրոջը, Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամին, Ծնողի ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված համավճարը վճարելու համար, եթե դիմելու օրվա դրությամբ Հաշվետերն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված է ««0»-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի կազմում և Հաշվետերը, Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի

անդամը, Ծնողը չունեն այդ բժշկական օգնությունը պետական պատվերի կամ բժշկական ապահովագրության շրջանակներում ձեռք բերելու իրավունք:

5.6 Հաշվետիրոջ մահվան դեպքում, հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության պահանջները, Որոշմամբ սահմանված կարգով Ծառայությունը Բանկին տալիս է կարգադրություն՝ տրամադրելով այն երեխայի տվյալները, ում անվամբ բացված պետական աջակցության հաշվին պետք է փոխանցվի Ընտանեկան դրամագլխի գումարը կամ այն անձի տվյալները, ում միանվագ պետք է վճարվի ընտանեկան դրամագլուխը, եթե Ծնողը կամ ժառանգորդը դիմել է Հաշվետիրոջ մահվանից հետո՝ երեք տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ 6. ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՑ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

6.1 Սույն Կանոնների 5.1 կետում նշված դեպքերում Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու համար Ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը դիմում է Բանկ՝ ներկայացնելով Հաշվից գումարի փոխանցման համար հիմք հանդիսացող հետևյալ փաստաթղթերը՝

1) Հայաստանի Հանրապետությունում բնակարանի գնման, բնակելի տան կառուցման համար տրամադրված և հիփոթեքով ապահովված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու դեպքում.

- Հաճախորդի և վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային Ծառայությունների Համարանիշ տրամադրելու վերաբերյալ տեղեկանք (բացառությամբ երբ ներկայացվել է նույնականացման քարտ) և/կամ սոցիալական քարտ և/կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք.
- տեղեկանք՝ համաձայն Բանկի կողմից սահմանված օրինակելի ձևի, եթե Հաճախորդի հիփոթեքային վարկը տրամադրված չէ Բանկի կողմից.
- վարկառուի՝ Հաշվետիրոջ ծնողը կամ որդեգրողը հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ.

2) Հաշվետիրոջ կամ Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի, Հաշվետիրոջ Ծնողի՝ ՀՀ կառավարության 2012թ. Դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված ուսումնական հաստատությունում ուսումնառելու ընթացքում ուսման վարձը (նախադպրոցական ուսումնական հաստատության վարձավճարը) վճարելու դեպքում.

- Հաճախորդի և Հաշվետիրոջ կամ Հաշվետիրոջ կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված ընտանիքի անդամի կամ Հաշվետիրոջ Ծնողի անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային ծառայությունների համարանիշ տրամադրելու վերաբերյալ տեղեկանք (բացառությամբ երբ ներկայացվել է նույնականացման քարտ) և/կամ սոցիալական քարտ և/կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք,
- «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի օգոստոսի 25-ի՝ «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 525 որոշմամբ սահմանված վավերապայմաններին բավարարող (համապատասխանող) հաշիվ-ապրանքագիր (հարկային հաշիվ).

1) Հաշվետիրոջ Ծնողին (բացառությամբ խնամակալի) տրամադրված վարկի տոկոսագումար վճարելու և մայր գումար մարելու դեպքում (եթե վարկի տոկոսադրույքը մասնակի սուբսիդավորվում է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի համաձայն և առկա է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի եզրակացությունը՝ վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ).

- Հաճախորդի, Հաշվետիրոջ և Վարկառու-Ծնողի անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային ծառայությունների համարանիշ տրամադրելու վերաբերյալ տեղեկանք (բացառությամբ երբ ներկայացվել է նույնականացման քարտ) և/կամ սոցիալական քարտ և/կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք.
- տեղեկանք՝ համաձայն Բանկի կողմից սահմանված օրինակելի ձևի, եթե Հաճախորդի վարկը տրամադրված չէ Բանկի կողմից.
- վարկառուի՝ Հաշվետիրոջ Ծնողը հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ.
- եզրակացություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից վարկը նպատակային օգտագործելու վերաբերյալ:

4) ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1017-Ն որոշմամբ սահմանված հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ, Լոռու մարզի Եղեգնուտ, Սյունիքի մարզի Տաթև, Տավուշի մարզի Իծաքար բնակավայրերում բնակարանի կամ բնակելի տան կամ այլ անշարժ գույքի գնման դեպքում (եթե գնորդը Հաշվետիրոջ Ծնողն է՝ բացառությամբ խնամակալի).
    - Հաճախորդի, Հաշվետիրոջ և Գնորդ-Ծնողի անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային ծառայությունների համարանիշ տրամադրելու վերաբերյալ տեղեկանք (բացառությամբ երբ ներկայացվել է նույնականացման քարտ) և/կամ սոցիալական քարտ և/կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք
    - Գնորդի՝ Հաշվետիրոջ Ծնողը հանդիսանալու փաստը հավաստող փաստաթուղթ.
    - գույքի առուվաճառքի՝ նոտարական կարգով վավերացված պայմանագիրը
    - անշարժ գույքի նկատմամբ Հաշվետիրոջ Ծնողի կամ Հաշվետիրոջ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը,
    - գույքը վաճառողի բանկային հաշվի համարը:

   (Այս դեպքում պետական աջակցության հաշվին առկա միջոցները գույքը վաճառողին են փոխանցվում ոչ ուշ, քան դիմումը և սահմանված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 3-րդ աշխատանքային օրը: Վաճառողին փոխանցվող գումարը չի կարող գերազանցել առուվաճառքի պայմանագրով սահմանված՝ գույքի գինը):
5) Նոր ծնված երեխայի մեկ տարին լրանալու ամսվան հաջորդող ամսվանից՝ ցանկացած բանկային հաշվի փոխանցելու միջոցով պարբերական վճարումներ (ոչ ավելի, քան ամսական 25000 դրամը) կատարելու դեպքում՝
    - Հաշվետիրոջ Ծնողի անձը հաստատող փաստաթուղթ և Հանրային ծառայությունների համարանիշ տրամադրելու վերաբերյալ տեղեկանք (բացառությամբ երբ ներկայացվել է նույնականացման քարտ) և/կամ սոցիալական քարտ և/կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք,

Սույն կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև սույն կանոնների 5.5-րդ կետով սահմանված նպատակներով Հաճախորդի դիմելու դեպքում, եթե դիմումի իրական շահառուն նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխան (զավակն) է կամ ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք չունեցող ծնողը, Բանկը Լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով հարցում է կատարում Ծառայությանը: Ծառայությունը, Բանկի ներկայացրած հարցման հիման վրա, նույնականացնում է դիմումի իրական շահառուին և պայմանագրով սահմանված կարգով հաղորդագրություն է ներկայացնում Բանկին՝ վճարումը հաստատելու կամ վճարումը մերժելու մասին: Բանկը, Ծառայությունից ստացված հաղորդագրության հիման վրա, մերժում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու մասին դիմումը՝ դրա մասին տեղեկացնելով

Հաճախորդին, կամ Հաճախորդի դիմումում նշած բանկային հաշվին է փոխանցում համապատասխան գումարը:

ԲԱԺԻՆ 7. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

7.1. Գումարի փոխանցման նպատակով, Հաճախորդի կողմից կեղծ, անվավեր, իրականությանը չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացվելու համար, Բանկը պատասխանատվություն չի կրում:

ԲԱԺԻՆ 8. ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1. Բանկը երաշխավորում է Հաճախորդի մասին տեղեկությունների գաղտնիությունը: Հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են տրամադրվել բացառապես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, ինչպես նաև սույն Կանոնների 8.2. կետով նախատեսված դեպքերում:

8.2 Հաճախորդը տալիս է իր համաձայնությունն (թույլտվությունը) առ այն, որպեսզի Բանկը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի (հրապարակի) Բանկի ղեկավարներին և այլ աշխատողներին՝ նրանց աշխատանքային պարտականություններին համապատասխան, ինչպես նաև Հաշվի պայմանագրով նախատեսված Բանկի իրավունքների իրացման և պարտականությունների կատարման նպատակով Բանկի կողմից ներգրավված երրորդ անձանց, ինչպես նաև օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով Բանկի վրա դրված պարտականությունները կատարելու նպատակով:

ԲԱԺԻՆ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Բոլոր վեճերը, որոնք ծագում են Հաշվի պայմանագրի կատարման ընթացքում, Կողմերի կողմից լուծվում են բանակցությունների միջոցով՝ երկկողմանի ընդունելի որոշումներ կայացնելու միջոցով:

9.2 Բանկը պարտավոր է քննել Հաճախորդի բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ Հաճախորդը իմացել է կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին:

9.3 Բանկը պարտավոր է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին տալ վերջնական պատասխան:

9.4 Բանակցություններն անարդյունք գրանցվելու կամ փոխադարձ ընդունելի որոշումներ չկայացվելու դեպքում՝ վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաճախորդը հնարավորություն ունի Հաշվի պայմանագրից բխող բողոք–պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված Պայմանագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250000,00 ՀՀ

դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

10.1 Կողմերը պայմանավորվում են, որ՝

ա) Հաշվի պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում, առաջարկ կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինեն Կողմերի կողմից, բացառությամբ՝ էլեկտրոնային եղանակով կամ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրության /SMS/ միջոցով իրականացվող հաղորդակցության, և պետք է ուղարկվեն սույն Դիմում-պայմանագրում նշված հասցեներով.

բ) Հաշվի պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական ծանուցում, այդ թվում՝ դատավարական փաստաթուղթ, ուղարկվում են Դիմում-պայմանագրով նշված հասցեներով:

Յուրաքանչյուր նման ծանուցում համարվում է պատշաճ ուղարկված, եթե (ա) հանձնվել է առձեռն, կամ (բ) ուղարկվել է փոստային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով՝ պատվիրված նամակով և ստացման վերաբերյալ հետադարձ ծանուցմամբ, կամ (գ) ուղարկվել է սուրհանդակային ծառայության միջոցով՝ ստացման վերաբերյալ հետադարձ ծանուցմամբ, դ) էլեկտրոնային ծանուցագիրը /ծանուցումը/ ուղարկվել է կողմի Դիմում-պայմանագրում նշած էլեկտրոնային հասցեին և առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում, ե) Բանկի հաղորդումն /ծանուցումը/ ուղարկվել է կարճ հաղորդագրության /SMS/ միջոցով՝ Հաճախորդի Դիմում-պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին և առկա է այն ստացված լինելու վերաբերյալ հավաստում:

Սույն կետում նշված գրավոր փաստաթղթերը/հաղորդումները համարվում են հասցեատիրոջ կողմից պատշաճ ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերը ծանուցման հասցեում այլևս չի գտնվում (չի բնակվում), եթե սույն Կանոնների 10.2. կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց ծանուցման (փոստային, էլեկտրոնային կամ այլ) հասցեները (գտնվելու/բնակության վայրերը) փոխելու մասին: Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում համարվում է Հաճախորդի կողմից պատշաճ ստացված (հանձնված) սույն կարգով ուղարկման պահից սկսած տասներորդ օրը, թեկուզև հետագայում պարզվի, որ Հաճախորդը նշված ծանուցումը փաստացի չի ստացել: Պահանջի, ծանուցման կամ այլ հաղորդման ուղարկման օրը որոշվում է Բանկի ելքային ամսաթվով կամ փոստի ծառայություններ մատուցող կազմակերպության դրոշմակնիքով:

10.2. Յուրաքանչյուր կողմ իրավունք ունի փոփոխել Հաշվի պայմանագրի շրջանակներում օգտագործվող իր ծանուցման հասցեն, հեռախոսահամարները և այդ մասին Կողմերը պարտավորվում են նախօրոք՝ առնվազն տասն աշխատանքային օր առաջ տեղեկացնել մյուս կողմին՝ միմյանց ծանուցման (փոստային) հասցեների (գտնվելու (բնակության) վայրերի և այլ տվյալների փոփոխությունների մասին, հակառակ դեպքում՝ Կողմերի միջև Հաշվի բացման պայմանագրից բխող գրավոր թղթակցություններն իրականացվում են Կողմերի կողմից Դիմում-պայմանագրում նշված ծանուցման հասցեներով: Փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

ԲԱԺԻՆ 11. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

11.1. Սույն Կանոններում և Սակագներում փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ Կանոնները և Սակագները հաստատվում (կատարվում) են Բանկի նախաձեռնությամբ՝ սույն բաժնով նախատեսված կարգով:

11.2. Բանկը տեղեկացնում է Հաճախորդին սույն Կանոններում և Սակագներում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ Կանոնները և Սակագները հաստատելու մասին ոչ ուշ, քան դրանք ուժի մեջ մտնելուց 30(երեսուն) օրացուցային օր առաջ՝ սույն Կանոնների 2.5 կետում նշված միջոցներից մեկով:

11.3. Սույն Կանոնների և Սակագների փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները և Սակագները ուժի մեջ են մտնում սույն Կանոնների 11.2 կետում նշված ժամկետի ավարտմանը հաջորդող օրվանից:

11.4. Սույն Կանոնների և Սակագների ցանկացած փոփոխություն և լրացում, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները և Սակագներն ուժի մեջ մտնելուց հետո հավասարապես տարածվում են այն բոլոր անձանց վրա, որոնք միացել են սույն Կանոններին, այդ թվում՝ մինչև ուժի մտնելը սույն Կանոններին միացած անձանց վրա:

11.5. Եթե Հաճախորդը համաձայն չէ սույն Կանոններում և Սակագներում կատարված փոփոխություններին և լրացումներին, այդ թվում նոր խմբագրությամբ հաստատված Կանոններին և Սակագներին, ապա իրավունք ունի լուծել Հաշվի պայմանագիրը սույն Կանոնների 12.2 կետով նախատեսված կարգով:

11.6. Եթե Հաճախորդը սույն Կանոնների 11.2 կետում նշված ժամկետի ընթացքում չի լուծում Հաշվի պայմանագիրը, ապա այդ փաստը հանդիսանում է բավարար և լիարժեք սույն Կանոնները և Սակագները փոփոխված կամ լրացված համարելու համար:

11.7. ՀՀ օրենսդրության և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի պարտադիր պահանջները, որոնց գործողությունը տարածվում է սույն Կանոնների վրա, ենթակա են պարտադիր կատարման: ՀՀ գործող օրենսդրության, Որոշման, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում, սույն Կանոնները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում համապատասխան իրավական ակտերի պահանջներին:

ԲԱԺԻՆ 12. ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ: ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀՐԱԺԱՐՈՒՄ: ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Հաշվի պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Պետական աջակցության հաշիվ փակելը կամ Դիմում-պայմանագիրը լուծելը:

12.2 Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Հաշվի պայմանագիրը: Հաշվի պայմանագրի լուծման համար Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել Հաշվի պայմանագիրը լուծելու վերաբերյալ դիմում՝ Բանկի կողմից սահմանված ձևով, և կարգավորել Հաշվի պայմանագրով Բանկի հետ փոխադարձ հաշվարկների կատարումը:

12.3 Բանկի կողմից Հաշվի փակման վերաբերյալ դիմումի ընդունումը հաստատվում է դրա վրա Բանկի կողմից համապատասխան նշում կատարելու փաստով:

12.4 Հաշվի պայմանագիրը համարվում է լուծված սույն Կանոնների 12.2 կետում նշված Հաճախորդի դիմումը ստանալու կամ Պետական աջակցության հաշվում առկա դրամական միջոցներն սպառվելու (զրոյացվելու) պահից:

12.5 Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Հաշվետիրոջ Հաշիվը փակելու համար:

12.6 Հաշիվը բացելիս Բանկը Հաճախորդին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

12.7 Հավելվածները հանդիսանում են սույն Կանոնների անբաժանելի մաս(եր)ը: